

սոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն² Այրարատոյ, այլ եւ ի սմանէ ծնեալ որդունս, ի գարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ³ աւգտասիրացն շահս եւ շքեղութիւնս: 10 Եւս եւ գետոցն գնացք բազմակերպ ձկամբք⁴ մեծամեծաւք եւ փոքումբք, զանազանեալ համովք եւ այլ եւ այլ տեսովք⁵ ուրախացուցեալ⁶ լցուցանէ զշնորհս ընչից եւ յագուրդ որովայնից ժրացելոցն եւ անվեհեր ջանացողացն:

11 Սնուցանէ յինքեան երկիրն ջրովք արուեստիւք եւ զառաւելութիւն հաւուցն յուրախութիւն եւ ի սթափումն որսատենչ ազատացն. զկրկնաձայն քաղցրաձայն առապարասեր վիմասոյգ սորամուտ երամս⁷ կաքաւացն եւ սալամբացն, եւ կամ զեղեգնաբնակ⁸ թփամուտ մացառաղաղ պարարտամարմին զանուշահամ ազգ աքարացն⁹ վայրենեաց. այլ եւ զջրասուզակ¹⁰ մամռախնդիր¹¹ խաւզակեր մեծանծունք¹² եւ յաղթամարմինք հաւքն, փորն եւ թանձրն եւ սագն, եւ կամ այլ բազում եւ անհամար ցամաքայնոցն եւ ջրայնոցն ջրկք¹³ թռչնոցն: 12 Իսկ թակարդացն¹⁴ շրջափակութեամբք, երագազիւք¹⁵ եւ գահողովքն, ելեալ ի յորս գունդք նախարարացն որդւովքն ազատացն. ուր ոմանք զհետ ցռուցն եւ այծեմանցն արշաւելով՝ զխիզախական զաղեղնաձայնն եւեթ բարբառիցին¹⁶. եւ այլք զհետ բուլից եղջերուացն եւ եղանց ձիարծակ եղեալ՝ զգործ կորովածիգ արանցն¹⁷ ցուցանեն. եւ կեսք սուսերաւք իբրեւ զմենամարտիկս՝ զսաստկանդամ¹⁸ երամս վարազացն զլորեցուցեալ սպանեն: 13 Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն դաստիարակաւք եւ ծառայիւք զայլ եւ այլ սեռս ի թռչնոցն որսացեալ

1 Ձ. եղեգնատեր

2 Ձ. դաշն

3 Ձ. ընծայէ

4 Ձ. ձկամբք

5 Ձ. համովք... տեսովք

6 ՁԱտ. ուրախացեալ

7 Ձ. ստորամուտ երամով

8 Ձ. զեղեգնաբնակ

9 Բտ. ագարացն

10 Ձ. զջրա ուղղակք

11 ՁԱտ. մամրախնդիր

12 Ձ. մեծայանծունք

13 Ձ. ջրք

14 ԲԳտ. թակարդացն

15 Ձ. շրջափակութեամբք երագազիւք

16 ՏՏ. զխիզախականն եւ զաղեղնայինն եւ եթ բարբառեցին. Ձ. զխիզախական զաղեղնաձայնն եւ եղ բարբառիցին

17 Թերեւս՝ կորովածիգ մատանցն

18 Ձ. զսատկանդամ